ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ս/թ մայիսի 31-ին Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը Գորիս համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 32 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր տասնմեկ, աշխատանքի տեղավորման հարցով՝ տասը, վնասված այգու փոխհատուցման, հոշոտված մոզիների փոխհատուցման, ընտանեկան նպաստի վերականգնման, տուն կառուցելու համար վարկ ստանալու, ոռոգման ջրի, տան կառուցումը ավարտին հասցնելու, տնամերձ հողատարածք ձեռք բերելու, քամուց վնասված տանիքի փոխհատուցման, բնակարան ձեռք բերելու, պետպատվերի շրջանակներում տղայի վիրահատության, հողի սեփականաշնորհման հարցերով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության տասնմեկ դիմումներին տրվել է դրական լուծում:

Աշխատանքի տեղավորման դիմումները վերցվել են հաշվառման:

Մնացած խնդիրները մարզպետի հանձնարարությամբ, սահմանված կարգով ընթացք տալու նպատակով, քննարկվում են մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներում: Դրանց լուծումները հստակեցնելու համար նախատեսվում է լրացուցիչ ուսումնասիրություններ կատարել տեղում:

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ